Ն/ՏՑ/10952

Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր
քարտուղար պարոն Սերգո Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԱՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Գործուղված աշխատակցի անունը, ազգանունը.**

Տաթևիկ Ցյուրքեր
Կարեն Աղաբաբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթների համակարգող
Իրավախորհրդատու

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ֆրանսիա, ք. Ստրասբուրգ 2023 թվականի նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1-ը

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)**

Եվրոպայի խորհուրդ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիայի (Բեռնի կոնվենցիա) մշտական հանձնաժողովի հանդիպմանը: Քննարկում Բեռնի կոնվենցիայի ընթացիկ աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև քարտուղարությանը ներկայացրած բողոքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում պետության և բողոքատուի կողմից:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**
   - Բելառուսի դադարեցումը Բեռնի կոնվենցիայի անդամակցմանը
   - Բեռնի կոնվենցիայի ֆինանսական և ռազմավարական զարգացման հարցերը
   - Մինչև 2030 թվականը Բեռնի կոնվենցիայի տեսլականը և ռազմավարական ծրագիրը ինչպես նաև ներդրումը 2020 թվականից հետո կենսաբազմազանության գլոբալ շրջանակում
   - Ընթացակարգային կանոնների հետագա հնարավոր փոփոխությունները
   - Իրավական տեսակետների մոնիթորինգ և իրականացում
   - Տեսակների և բնակմիջավայրերի մոնիթորինգ
   - Երկկենցաղներ և սողուններ. փորձագետների խմբի հանդիպում և ծովային կրիաների պահպանություն
   - Գործողությունների ծրագիր Ruddy duck-ի վերացման համար
   - Խոշոր կաթնասունների պահպանությանն ուղղված աշխատանքները
   - Բնակմիջավայրերի պահպանություն. Էմերալդ ցանցի ստեղծում
   - Տեսակների և ապրելավայրերի պահպանության կարգավիճակի վերաբերյալ N 8 (2012թ.) որոշման համաձայն հաշվետվության ներկայացում

**Բեռնի կոնվենցիայի քարտուղարությանը ներկայացված բողոքների քննարկում**

- ✓ Հյուսիսային Մակեդոնիա. Հնարավոր բացասական ազդեցությունները Օհրիդի լճի և Գալիչիցա ազգային պարկի թեկնածու Էմերալդ տարածքների վրա՝ ենթակառուցվածքների զարգացումների պատճառով. տեղում հրավիրված փորձագետի գնահատում (OSA)
- ✓ Հյուսիսային Մակեդոնիա. ՀԷԿ-ի զարգացում Մավրովո ազգային պարկի տարածքում
- ✓ Մոնտենեգրո. Սկադար լճի ազգային պարկում և թեկնածու Էմերալդ ցանցի տարածքում առևտրային նախագծի զարգացում
- ✓ Ալբանիա. Վյոսա գետի վրա զարգացումների հնարավոր բացասական ազդեցությունը, ներառյալ ՀԷԿ-ի զարգացումը և Վլորայի միջազգային օդանավակայանը
- ✓ Բոսնիա և Հերցեգովինա. ՀԷԿ-ի զարգացման հնարավոր բացասական ազդեցությունը Ներետվա գետի վրա
- ✓ Կիպրոս: Ակամասի թերակղզի
- ✓ Հունաստան. Սպառնալիքներ ծովային կրիաներին Թինես Կիպարիսիասում

- ✓ Թուրքիա. Ֆեթիիյե և Պատարա ԲՀՊՏ-ներում բնադրող լողափերի ենթադրյալ դեգրադացիա
- ✓ Հունաստան. Հանձնարարական թիվ 9 (1987) Կարետտա Կարետայի պաշտպանության մասին Լագանաս ծովածոցում, Զակինթոս
- ✓ Թուրքիա. Մերսին Անամուր լողափում բնակավայրերի ոչնչացում
- ✓ Բուլղարիա. Մայրուղի Կրեսնայի կիրճով
- ✓ Հայաստան. Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը և դրա ազդեցությունը Էմերալդ ցանցի վրա

- Համագործակցության և հաղորդակցության գործունեության 2024 թվականի աշխատանքային ծրագիր.
- 2024 թվականի գործունեության և բյուջեի նախագիծը.
- Մշտական հաձնաժողովի նախագահի, փոխնախագահի եվ բյուրոյի անդամների ընտրությունը
- Մշտական հանձնաժողովի հիմնական որոշումների ընդունումը

**7. Հանդիպումները, ելույթները.**

- Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը և դրա ազդեցությունը Էմերալդ ցանցի վրա բողոքի շրջանակում շրջակա միջավայրի նախարարությունը ներկայացրեց Էմերալդ տարածքների վերանայման գործընթացը
- Խոշոր գիշատիչ կենդանիների վերաբնակեցման ծրագրի վերաբերյալ Հայաստանը հարց բարձրացրեց, արդյոք հաշվի առնվե՞լ է սոցիալական վերաբերմունքն ու ընկալումը, քանի որ տեղի բնակչությունը սովորաբար դիմադրում են նմանատիպ ծրագրերին:
- Ալբանիայի «Վիորա» միջազգային օդանավակայանի հետ կապված՝ Հայաստանը ընդգծեց, որ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ տարածքը նախկինում եղել է ռազմական օդանավակայան, այնուհետև դարձել է աղբավայր, և ներկայումս տարածքն դեգրադացված է: Հետևաբար, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական ուշադրությունը պետք է ուղղված լինի այն խոնավ տարածքների վրա, որոնք հարում են օդանավակայանի տարածքին:
- Բուլղարիայի Կրեսնա կիրճում գտնվող ավտոճանապարհին վերաբերյալ Հայաստանը շեշտել է այն փաստը, որ ավտոճանապարհը նախատեսվում է իրականացնել գործող ճանապարհի վրա, և, հետևաբար, ենթադրվում է, որ դա շատ ավելի քիչ վնասակար է շրջակա միջավայրի համար, քան նոր թունել կառուցելը, որը կառաջացնի հսկայական քանակությամբ թափոններ և դրանց տեղափոխումը ևս կունենա բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա:
- Հունաստանում ծովային կրիաների խնդրի առնչությամբ Հայաստանը շեշտեց Հունաստանի կառավարության գրանցած առաջընթացի մասին, ինչպես նաև

այն փաստը, որ այս հարցի առընչությամբ կառավարությունը ստացել է խնդրահարույց ժառանգության, և հաշվի առնելով իրավիճակը ակնհայտ փոփոխություններն ավելի երկար ժամանակ են պահանջում:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Մշտական հանձնաժողովը.

- ի գիտություն է ընդունել երկու կողմերի հաշվետվությունները և շնորհակալություն հայտնեց Հայաստանի իշխանություններին և բողոքարկող CEE Bankwatch Network-ին իրենց ներկայացումների համար: Ս.թ. սեպտեմբերին կայացած իր վերջին նիստում Բյուրոն որոշել էր այս գործը դարձնել «հնարավոր գործ»՝ կապված Ամուլսարի ոսկու հանքի և Հայաստանում «Էմերալդ ցանցի» վիճակի խիստ մտահոգիչ իրավիճակի հետ:
- ի գիտություն է ընդունել Հայաստանի իշխանությունների տեղեկատվությունը, որ իրավական գործընթացները ճիշտ են իրականացվել, և, հետևաբար, Ամուլսարի ոսկու հանքավայրի բնապահպանական և սոցիալական ազդեցության նոր ուսումնասիրության (ԲՍԱԳ) կարիք չկա, ինչպես պահանջել է բողոքատուն: Նաև նշեց, որ Ջերմուկ ազգային պարկը որպես պահպանվող տարածք ստեղծելու գործընթացը հետաձգվել է գերակա պետական առաջնահերթությունների և տարածաշրջանային անկայունության պատճառով: Ինչպես նաև տեղեկացրել է, որ Էմերալդ ցանցի տարածքի վերանայման գործընթացը ընթացքում է, և քարտուղարությունը լրացուցիչ կտեղեկացվի: Նախնական արդյունքները վկայում են, որ տեղանքների բավարարությունը կբարելավվի, քանի որ թիրախային տեսակներն ու ապրելավայրերը կլինեն առավել լավ ներկայացված:
- նշել է բողոքատուի մտահոգությունները, որ հանքը ստացել է ֆինանսավորում Եվրասիական զարգացման բանկից, ռուսական բաժնետոմսերի մեծ չափաբաժնով և հունիսին հանքարդյունաբերական ընկերության և փոխվարչապետի հանդիպման ժամանակ քննարկվել է հանքի շահագործման վերսկսումը, առանց այլ շահագրգիռ կողմերի ներգրավվածության և նոր ՇՄԱԱԳ-ի: Նաև նշվեց, որ հանքի շահագործման արդյունքում հնարավոր անդրսահմանային հետևանքների մասին:
- հայտնել է իր մտահոգությունը, որ Հայաստանում Էմերալդ ցանցի տարածքի կտրուկ կրճատման գործընթացները, ներառյալ այն տարածքը, որտեղ գտնվում է Ամուլսարի հանքավայրը, ընթացում են: Այն կոչ է արել Հայաստանին ուշադիր դիտարկել այս գործընթացը. քանի որ տարածքների նման կրճատումները կարող են բացասական ազդել պահպանվող տարածքների համաեվրոպական ցանցի բավարարության համար: Այն հիշեցրեց իր թիվ 208 (2019թ.) և թիվ 157 (2011թ., վերանայված 2019թ.)

հանձնարարականները Էմերալդ ցանցի տարածքների վերաբերյալ և խրախուսեց իշխանություններին սերտ կապի մեջ մնալ Քարտուղարության հետ այս գործընթացի ընթացքում և անհրաժեշտության դեպքում խնդրել տեխնիկական աջակցություն:

- մտահոգված էր նաև բողոքատուի այն պնդումով, որ այս կարևոր գործընթացներում հանրային ներգրավվածությունը կարծես թե անտեսվել է Հայաստանի կառավարության կողմից, որ նոր հանքարդյունաբերության ռազմավարությունը թույլ կտա շրջանցել հանրության մասնակցությունը՝ չնայած Օրհուսի կոնվենցիայով նախատեսված պարտավորությանը: Նշվեց նաև աննախադեպ թվով դատավարություններն ընդդեմ հանրային մասնակցության (SLAPPs) անկախ փորձագետների, իրավաբանների և լրագրողների դեմ, ովքեր դեմ էին նախագծին:
- ի գիտություն է ընդունել բողոքատուի խնդրանքը՝ հանձնարարել տեղում գնահատել (OSA) Ամուլսարի հանքի: Այնուամենայնիվ, ընթացող գործընթացների և ՀՀ կառավարության հավաստիացումների պատճառով որոշվել է հետաձգել այս մասին որոշումը մինչև 2024 թվականը. Բյուրոն միևնույն ժամանակ, հորդորել է  որ կողմերը տեղեկացնեն ցանկացած նոր տեղեկատվության մասին:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

- Միևնույն ժամանակ, Բյուրոն կոչ է արել  Հայաստանի իշխանություններին՝ դադարեցնելու ոսկու հանքի շինարարությունը, որը կարող է բացասաբար ազդել Կոնվենցիայով պահպանվող կենսամիջավայրերի և տեսակների վրա՝ անկախ այն բանից, թե դրանք վերաբերում են Էմերալդ ցանցին, թե ոչ՝ նաև ընդգծելով. Պարսկական ընձառյուծի (Panthera pardus tulliana) ներկայության վերջին ապացույցները, որը կրիտիկական վտանգված է տարածաշրջանում, ինչպես նաև կենսաբազմազանության այլ վերջին բացահայտումները: Կոմիտեն նաև հրավիրել է Հայաստանի իշխանություններին վերանայել ոսկու հանքի համար առկա ՇՄԱԱԳ-ը՝ հաշվի առնելով կենսաբազմազանության վերջին բացահայտումները, տեղական գիտական և քաղաքացիական համայնքի փորձաքննությունը և ջրային անդրսահմանային հնարավոր ազդեցությունները:
- ողջունեց իշխանությունների հայտարարությունը, որ իրենք քայլեր են ձեռնարկում ՔՀԿ-ներին ավելի սերտորեն ներգրավելու գործընթացներին. հորդորեց ուժեղ ջանքեր գործադրել այս ուղղությամբ:
- Հայտարարել է, որ գործը մնում է հնարավոր, և երկու կողմերը հրավիրվել են 2024 թվականին հաշվետվություններ ուղարկելու գարնանային բյուրոյին նիստին՝ ներկայացնելով երկու տարբեր խնդիրներ՝ Ամուլսարի ոսկու հանքի

բացասական ազդեցության և  Հայաստանում թեկնածու Էմերալդ ցանցի տարածքների վերանայման վերաբերյալ տեղեկություններով:

Գործուղվող՝ Տաթևիկ Ցյուրքեր

Գործուղվող՝ Կարեն Աղաբաբյան